


ՓԱՓԿԱՍՈՒՆ ՏԻԿՆԱՅՔ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ



Մոռացան զկանացի տկարութիւնն և եղին արուք առաքինիք ի հոգեւոր պատերազմի... Միամտութեամբ յաղթեցին խորամակութեանն, և սուր սիրով լուսացին զկապուսակ ներկուածն նախանձուն, հատին զարմատս ազաւորութեան և չորացան մահաբեր պըտուղը ոսոսոց... (ԵՂԻՇԷ)։

Երբ շնորհեն Երկինք որ Ոգին Հայաստանի յառնէ կանգնի վեհաշունչ և իւր հոգետաւիղը քնարին վրայ երգէ քաղցրաձայն.

« Հայոց աշխարհիկ, զարունդ է հասել,
Ահա գեղեցիկ զարուն քո եկել ».

այն ժամանակը պիտի սաղմոսերգեն նաև նոր Եղիշենք, ու այս անգամ ոչ թէ սոսկ «Աւարայրի պղպուլ»ներ, այլ «հանուրց Հայաստանեայց» հրեշտակներ պիտի բարբառին։

Մայր հայրենեաց փափկասուն տիկիններն, արդ, ոչ թէ լոկ պահպանեցին պատիւը իրենց նախամայրերուն արժանեացը, այլ նոյն իսկ մերթ զլեցին անցան քան զամենայն ձիւր շնորհալից։ Անհամեմատօրէն սքանչելի՝ չքնաղ առաքինութիւններ արձանագրուեցան այն հողերուն վրայ, այն աւազներուն, այն ապատ-անապատներուն, ապալեր, ապառաժ, ափափայ, անմարդի՝ ամայացեալ՝ արահտաներու անապատներու ժայռերու լեռներու երեսին վրայ...

Պիտի անցնին դարեր, պիտի գան և գնան ազգեր, բայց Հայոց պատմութեան մէջ կանացի էջերը պիտի երբէք չաղարտեն իրենց երփնագեղ ներբրանցները։

Ուրախալի երևոյթ մ'ալ այն է՝ որ՝ գեղեցիկ զրուագ մը պիտի կազմէ նաև տարամեծ հայ կանանց պատմութիւնը։ Մենք ներկայ տողերովս կ'ուզենք տալ համառօտութիւն մը երկու ականաւոր հայու հիներու հայրենասիրական գործունէութեանը։

Ա.

ՏԻԿԻՆ ՏԻԱՆԱ ԱՂԱԲԵԿ ԱՐԳԱՐԵԱՆ

Տիկ. Անահիտ (կամ ըստ օտարահունչ կոչման՝ Տիանա Արգար՝ մէկն է մեր այն մայրիկներէն, որոնք իրենց ամբողջ կեանքին մէջ հայրենի աւանդութեանց յուշիկներովը հրճուիլ սիրած են։ Անիկայ դարու մը կէսը և աւելի ևս համրած է օտար երկինքներու ներքև. իւր վերջին բնակավայրն եղած է Եօքօհամա, ուր և (այս պատերազմական շրջաններուն մէջ) գիտցաւ նա փայլեցնել իւր հայրենասիրական բազմազգի նուիրաբերութեան՝ արդիւնները։ Նա ոչ միայն բարեգործական առատաձեռնութեամբ երեւելի եղած է, այլ նաև իբր հայ զրագիտունի սակայն՝ մնարու պեան լեզուին ամենաավարժ հրահանգներուն հմտանալու բարեպատեն անորմէնքէն զուրկ մնացած ըլլալով, թիչ բան զրած է նա հայերէն, ու այն ալ հնդկահայ զրարարախառն՝ ինքնատիպ բարբառով։ Բայց անոնց իմաստը — հայրենասիրական անկեղծիկ շունչով օծուած, — ապացոյց մ'է իւր ազնիւ զգացումներուն։

Տիկին Արգարեանը, սակայն, կարողացի է իւր միտքը շատ յստակօրէն արտայայտել, ի նպաստ մեր թշուառ հայրենիքին, անգլիերէն լեզուով։ — «Տաւրոս»էն կ'անհնդ հետեւալ պարբերութիւնները։

Մեր աչաց առջին է իր երկու գրքոյկները.

1. — The Peace Problem,

2. — Peace and no Peace,

ինչպէս նաև իր մէկ քերթածը, որ հրատարակուած է The Seattle Sunday Times օրաթերթի Յնվր. 19 թիւին մէջ.

America! Armenia Calls to Thee
խորագրով¹։

Ամերիկեան երեք թերթեր (Buffalo News, Chicago News և Post-Dispatch, St. Louis) մատենախօսական-ներ գրած են ԽԱՂԱՂՈՒԹԻԱՆ ԽՆԻԴԻՐ Հատորիկին վրայ։

Պրֆալօի լրագիրը սապէս կը վերջացնէ իր խօսքը. — «Տարիներ յառաջ Պուլկա-րիոյ մէջ ի գործ դրուած անգլոսթիանց մասին կլէտսթընի յիշած մեծ ապացոյցը, իր արհաւիրքներուն և կոշտութիւններուն դուրսեմար, որոնք իրը վկայութիւն յառաջ բերուած են, աւելի զօրաւոր չեն քան այս գրքոյկին մէջ յիշուածները»։

Շիքագօի լրագիրը, գրքոյկին բովանդակութիւնը վերլուծելէ ետքը, կ'ըսէ — «Գրուած է այնպիսի մէկէ մը, որ տառապեր է և կ'զգայ. սարսուղի իր կողմէն է այդ»։

Իսկ Ս. Լուիզի թերթը կը գրէ. — Տիա-նա Աղաբեկ Արգար, տարագրութեան մէջ մաղարէտահի մըն է... Բոլոր պիտանի ծանօթութիւնները «Աշխարհի քաղաքա-կանութեան» և «պետութիւններու հա-մաձայնութեան» մասին, որոնք կրթիչ են, ձեռք են բերուած իր հայ արիւնաւ կիցներուն ջարդերուն միջոցաւ... Ատիկա այնչափ իրական և կենդանի է իրեն հա-մար, որ երբ կը գրէ «Խաղաղութեան խնդրին» վրայ, Սիբրիլայէն աւելի ներ-շնչուած է և վալայէն աւելի՝ պերճա-խօս։ Ան գիտէ Հին և Նոր Կտակարան-ները, ինչպէս նաեւ աշխարհի քաղաքա-կանութիւնը, և երկուքին ալ շատ աւելի կը մօտենայ սրտի ծանօթութեամբ քան շատ մը դիւանագէտներ։ Նա խաղաղու-թիւն կը ջատագովէ յանուն Քրիստոնէու-թեան ընդդէմ «աշխարհի անէծքին — կայ-սերականութեան»։ Նա Քրիստոսի խօս-քերը էջ էջ վկայութեան կը բերէ Քրիս-տոնեաներուն այնպիսի խորին ջերմեան։

1. Այս գիրքուածին բնագիրն ու Հայերէն Թարգմա-նութիւնը կրճաւ կարգաւ փափագողներ Տարուսի 427րդ էջին վրայ.

գութեամբ մը, իրրե թէ ասոնք ունենային Միջազգային Օրինաց ոյժը։ Ետքը՝ յուսահատելով կը յայտարարէ, թէ որպէս զի «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հանութիւն» ը թագաւորէ, ասոր միակ միջոցն է որ Քրիստոնեայը դառնան Քրիստոնէութեան։

Աշխարհի քաղաքականութեան ծանօ-թութիւն, բացարձակ անկեղծութիւն և բոցաշունչ պերճախօսութիւն կը կազմեն նկարագիրը այս ներշնչեալ կողմէն»։

Կարելի չէ երկրայիլ թէ տիկ. Արգա-րեանի և իւր զուգակշիռներուն անմրցա-կից արդիւնքը ևս պիտի գնահատուի հիա-ցումով, Ապագայէն։

ՄԵՆԱՍԻՐ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՐԵՒՈՒ

Շար. Բ. Գլխոյ.

(Shu baqamqatay tş 341-1919)

Բոլորական խաւարման երևոյթը շատ տարբեր է ըստ դիտողութեան ժամանակ-ներու։

Արևային յուզումի պարբերութիւններու ժամանակ, պսակը բոլորովին կը պատէ աստղը, կարծես թէ Արեւը ընկզմած է զինքը ամէն կողմը շրջապատող խիտ մի-ջոցի մը մէջ։ Այսպիսի էր 1905ին խա-ւարման ժամանակ, ի Սիպքա տեսանելի պսակին ձևը, ուր իմ պաշտօնիս ժամա-նակ կըցայ ուսումնասիրել և լուսանկարել երևոյթը։

Որչափ որ արևային յուզումները կը խաղաղին, տարածութիւնները և պսակին ցայտերը կը հեռանան Արեւու բնեռներէն և կը ծոխ մեղմով դէպ ի նուազ բարձ-րացած լայնութիւնները։ Այս ժամանակ պսակը կ'առնու տարտամ կերպով սուրբ Անդրէի խաչի մը ձևը։ Ապա քիչ քիչ տարածութիւնները մէկմէկու կը մօտենան և երբ Արեւու մակերևոյթը հանդարտ